ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----------2022թ. N ---- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Հ. ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑ 2/3 ՇԵՆՔԻ Հ. 1/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2022 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.498-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Հ.Հակոբյան փողոց հ.2/3 շենքի հ.1/1 բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման հ.19102021-01-0238 վկայական) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) նույն բնակարանի բնակիչներ՝ Թեյմուրազ Շալվովի Ուսոևին, Հերիքնազ Ուսոյի Քարամյանին, Օմար Թեմուրազի Ուսոևին, Գիյա Թեյմուրազի Ուսոևին, Լևոն Թեյմուրազի Ուսոևին, Միլենա Թեմուրազի Ուսոևաին (6 անձ):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Հ. ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑ Հ.2/3 ՇԵՆՔԻ Հ.1/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով առաջարկվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Արաբկիր վարչական շրջանի Հ.Հակոբյան փողոց հ.2/3 շենքի հ.1/1՝ 63,51քմ ընդհանուր մակերեսով բնակարանը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Թեյմուրազ Շալվովի Ուսոևին, Հերիքնազ Ուսոյի Քարամյանին, Օմար Թեմուրազի Ուսոևին, Գիյա Թեյմուրազի Ուսոևին, Լևոն Թեյմուրազի Ուսոևին, Միլենա Թեմուրազի Ուսոևային:

Հ.Հակոբյան փողոց հ.2/3 շենքի հ.1/1՝ 63,51քմ ընդհանուր մակերեսով բնակարանը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.19102021-01-0238 վկայականի տվյալների հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Թեյմուրազ Ուսոևը /1985 թվականից/ և ընտանիքի անդամները բնակվում են Հ.Հակոբյան փողոց 2/3 շենքի հ. 1/1 բնակարանում /հիմք՝ Արաբկիր համայնքի «Շենքերի կառավարում» համատիրության կողմից 21.10.2021թ. տրամադրված տեղեկանք/: Ուսոևների ընտանիքի անդամների մի մասը 2004 թվականից հաշվառված են եղել Հ.Հակոբյան փողոց հ.2 շենք հ.2 հասցեում, որին 17.05.2021թ. Երևանի քաղաքապետի հ.1575-Ա որոշմամբ տրամադրվել է Հ.Հակոբյան փողոց հ.2/3 շենքի հ.1/1 բնակարան հասցեն: Համաձայն ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Արաբկիր անձնագրային բաժանմունքի կողմից 18.01.2022թ. տրված հ.8/2-236 տեղեկանքի Թեյմուրազ Ուսոևը և ընտանիքի անդամները 2021 և 2022 թվականներից հաշվառվել են Հ.Հակոբյան փողոց հ.2/3 շենքի հ.1/1 հասցեում:

Քննարկվող բնակարանը փաստացի օգտագործվում է Թեյմուրազ Ուսոևի և ընտանիքի կողմից, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով հնարավորություն չեն ունեցել այն սեփականաշնորհել:

Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի հ. 498-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են 2021 թվականի դեկտեմբերի 28-ի հ. 498-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ փաստական հանգամանքները, ուստի Ուսոնների ընտանիքի սեփականության իրավունքը տարիներ շարունակ զբաղեցրած բնակարանի նկատմամբ ձևակերպելու համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Հ.ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑ 2/3 ՇԵՆՔԻ Հ. 1/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Հ.Հակոբյան փողոց հ.2/3 շենքի հ.1/1 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ Հ.ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑ 2/3 ՇԵՆՔԻ Հ. 1/1 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Հ. Հակոբյան փողոց հ.2/3 շենքի հ.1/1 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ